Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Սարալանջի Հովհ. Թումանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ՆԶՊ առարկայի (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

դիմում (Ձև 1),

մեկ լուսանկար 3 x 4 չափի,

բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

անձը հաստատող փաստաթուղթ,

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

ինքնակենսագրություն (Ձև 5),

այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթը,

ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ հոկտեմբերի 12-ից մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր ժամը 10 : 00-ից մինչև 15 : 00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. նոյեմբերի 6-ին՝ ժամը 14 : 00-ին,** ՀՀ Լոռու մարզի Սարալանջի Հովհ. Թումանյանի անվան հիմնական դպրոցում: Հասցեն՝ գ. Սարալանջ, 2-րդ փողոց / 1 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094)14 58 58 հեռախոսահամարով: